ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.01.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2019/01

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միեր Անանյանի.

Մասնակցությամբ՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ներկայացուցիչներ՝

Հ. Ավետիսյանի (լիազորագիր, տրված՝ 09.01.2019թ.)

Գ. Գևորգյանի (լիազորագիր, տրված՝ 11.01.2019թ.)

Ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 09.01.2019թ. թիվ 26-3/95-19 գրությամբ «Երևանի տնաշինական կոմբինատ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 26.12.2018թ. թիվ 02/16.4/6408-18 գրության հիման վրա, 09.01.2019թ. թիվ 26-3/95-19 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Երևանի տնաշինական կոմբինատ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Երևանի տնաշինական կոմբինատ» ՓԲԸ -ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Երևանի տնաշինական կոմբինատ» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2019/01 ընթացակարգի շրջանակներում 14.01.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **<u>ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 26.12.2018թ. թիվ 02/16.4/6408-18 գրությամբ հայտնել է, որ 2017 թվականի մարտի 29-ին կազմակերպված «ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/5» ծածկագրով Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի հանրակացարանային նոր մասնաշենքի կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի արդյունքում 2017 թվականի հուլիսի 24-ին ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի (այսուհետ՝ պատվիրատու) և «Երևանի տնաշինական կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ նաև՝ կապալառու) միջև կնքվել է N «ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/5» պետական գնման պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր):

Հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված եզրակացությունը, Պայմանագրի 3.1.4 կետի ա) և բ) ենթակետերը, ինչպես նաև կապալառուի կողմից ներկայացված գրությունը (կցվում են)՝ պատվիրատուն 2018 թվականի դեկտեմբերի 25-ից միակողմանի լուծել է պայմանագիրը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2019/01 ընթացակարգի շրջանակներում 14.01.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր հայտնել են, որ Պայմանագրի համաձայն՝ աշխատանքները նախատեսվել են սկսել 2018թ. փետրվարի սկզբից: Ընկերությունն ուշացումով է սկսել Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումը: 27.06.2018թ. ներկայացվել է առաջին կատարողական ակտը: Ընկերության կողմից աշխատանքները կատարվել են շատ դանդաղ և ժամկետների խախտումներով: Պատվիրատուն բազմիցս նախազգուշացրել է Ընկերությանը Պայմանագրի պատշաճ կատարման անհրաժեշտության վերաբերյալ, սակայն Ընկերությունը գրություն է ուղղել Պատվիրատուին հայտնելով, որ ի սկզբանե Ընկերությունը ներկայացրել է ցածր գին, որը հանգեցնում է Ընկերության սնանկության:

4. ՍՑ-ԱՄ-2019/01 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ԱՄ-2019/01 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և «Երևանի տնաշինական կոմբինատ» ՓԲԸ-ի միջև 24.07.2017թ. կնքվել է կապալային աշխատանքների կատարման «ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/5» ծածկագրով գնման պայմանագիրը, որով «Երևանի տնաշինական կոմբինատ» ՓԲԸ-ն պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի հանրակացարանային նոր

մասնաշենքի շինարարական աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվել է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

2. Ընկերությանն ուղղված 25.12.2018թ. թիվ 02/16.4/6405-18 գրությամբ ՀՀ քաղաքաշինության կոմիտեն հայտնել է, որ հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված եզրակացությունը և Պայմանագրի 3.1.4-րդ կետի «ա» և «բ» ենթակետերը՝ Պատվիրատուն 25.12.2018թ. միակողմանի լուծում է Պայմանագիրը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Մհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 09.01.2019թ. թիվ 26-3/95-19 գրությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 26.12.2018թ. թիվ 02/16.4/6408-18 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՕ-21-Ն օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ սույն օրենքի պահանջները չեն տարածվում մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելն սկսած և չդադարած, ինչպես նաև կնքված և գործող գնման գործարքների վրա, իսկ դրանց հետ

կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների կնքման պահին գործող իրավական ակտերով:

«Գնումների մասին» ՀՕ-206-Ն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և «Երևանի տնաշինական կոմբինատ» ՓԲԸ-ի միջև 24.07.2017թ. կնքվել է կապալային աշխատանքների կատարման «ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/5» ծածկագրով գնման պայմանագիրը, որով «Երևանի տնաշինական կոմբինատ» ՓԲԸ-ն պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի հանրակացարանային նոր մասնաշենքի շինարարության աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվել է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագրի 1-ին կետի 1.3-րդ ենթակետով նախատեսվել է, որ 2017թ. նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակում կատարվող աշխատանքների համար կատարման վերջնաժամկետ է սահմանվում 15.11.2017թ.:

Պայմանագրի թիվ 2 հավելվածով նախատեսվել է աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկ:

Պայմանագրի ընդհանուր գինը սահմանվել է 660 384 318 ՀՀ դրամ:

Կողմերի միջև 16.02.2018թ. կնքվել է Պայմանագրի թիվ 2 համաձայնագիրը, որի 1-ին կետի 1.1 ենթակետով նախատեսվել է Պայմանագրի N 1 հավելվածով հաստատված ծավալաթերթ- նախահաշվով նախատեսված աշխատանքներից չկատարված (մնացորդային) և 2018թ. ընթացքում կապալառուի կողմից կատարման ենթակա աշխատանքների գինը սահմանել 195 219 000 ՀՀ դրամ:

Նույն համաձայնագրի թիվ 1 հավելվածով նախատեսվել է աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկը:

Նշված գրաֆիկի համաձայն՝ աշխատանքների կատարման սկիզբը նախատեսվել է 27.02.2018թ., իսկ ավարտը սահմանվել է 31.10.2018թ.:

N	Աշխատանքների կատարման ժամկետը		Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների նվազագույն ծավալը (արտահայտված ՀՀ դրամով) Հազար դրամ
	Սկիզբ	Ավարտը (ներառյալ)	
1	27.02.2018թ.	20.03.2018թ.	8468.3
2	21.03.2018թ.	20.06.2018թ.	14908.5
3	21.06.2018թ.	20.09.2018թ.	103086.4
4	21.09.2018թ.	31.10.2018թ.	68755.8
Ընդամենը			195 219.0

Ընկերությանն ուղղված 01.10.2018թ. թիվ 02/27.2/4832-18 գրությամբ Պատվիրատուն Ընկերությանը հայտնել է, որ 16.02.2018թ. թիվ 2 համաձայնագրի օրացուցային գրաֆիկով աշխատանքների ավարտ է սահմանվել 31.10.2018թ.:

28.09.2018թ. դրությամբ Ընկերության կողմից կատարվել են 29 297. 376 հազ. ՀՀ դրամի աշխատանքներ՝ թերակատարելով երրորդ եռամսյակում նախատեսված աշխատանքների ծավալը՝ 100 871. 166 հազ. ՀՀ դրամով:

Նույն գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ անհրաժեշտ է սեղմ ժամկետում շինարարական հրապարակը համալրել աշխատանքային և նյութական ռեսուրսներով՝ նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կատարելու համար, հակառակ դեպքում Ընկերության նկատմամբ կկիրառվեն պետական գնման պայմանագրով սահմանված տույժերը և տուգանքները:

«Երևանի տնաշինական կոմբինատ» ՓԲԸ-ին ուղղված 27.10.2018թ. թիվ 02/27.2/5395-18 գրությամբ ՀՀ քաղաքաշինության կոմիտեն հայտնել է, որ 25.09.2018թ. Պատվիրատուի աշխատակիցների կողմից կատարվել է այցելություն շինարարական հրապարակ, ուսումնասիրվել է շինարարական աշխատանքների ընթացքը, քննարկվել են

շինարարական աշխատանքների կատարման դանդաղ տեմպի և օրացուցային գրաֆիկի խախտման հետ կապված հարցեր, կազմվել է համապատասխան արձանագրություն:

23.10.2018թ. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի աշխատակիցների կողմից կատարված այցելության արդյունքում պարզվել է, որ օբյեկտում շինարարական աշխատանքներ չեն իրականացվում՝ անտեսելով այն հանգամանքը, որ 16.02.2018թ. թիվ 2 համաձայնագրի օրացուցային գրաֆիկով աշխատանքների ավարտ է սահմանվել 31.10.2018թ.:

24.10.2018թ. դրությամբ Ընկերության կողմից կատարվել են ընդամենը 56198.574 հազ. դրամի աշխատանքներ՝ թերակատարելով ծրագիրը 139020.426 հազ. դրամով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հայտնել է, որ անհրաժեշտ է անհապաղ վերսկսել շինարարական աշխատանքները, շինարարական հրապարակը համալրել աշխատանքային և տեխնիկական ռեսուրսներով՝ պետական գնման պայմանագրով սահմանված պարտավորություններն ամբողջությամբ կատարելու համար:

Նույն գրությամբ Պատվիրատուն Ընկերությանը նախազգուշացրել է պայմանագրով սահմանված տույժերի և տուգանքների, ընդհուպ մինչև պայմանագրի միակողմանի լուծման հնարավորության մասին:

Համաձայն ՀՀ քաղաքաշինության կոմիտեին ուղղված աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող «Շին-Տեխ» ՍՊԸ-ի 14.12.2018թ. թիվ 019 գրության՝ «Երևանի տնաշինական կոմբինատ» ՓԲԸ-ն Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի տարածքում հանրակացարանային նոր մասնաշենքի կառուցման նպատակով նախատեսված պարտավորությունները պատշաճ կերպով չի կատարել, շինարարական աշխատանքներն իրականացվել են ժամանակացույցի խախտումներով, որի պատճառով 2018թ. համար նախատեսված շինմոնտաժային աշխատանքներն ավարտին չեն հասցվել: Տվյալ պահի դրությամբ աշխատանքները դադարեցվել են:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեին ուղղված 12.12.2018թ. գրությամբ «Երևանի տնաշինական կոմբինատ» ՓԲԸ-ն հայտնել է, որ 2018թ. Ընկերությունը կատարել է 73276.151 հազ. դրամի շինմոնտաժային աշխատանքներ: Շինմոնտաժային աշխատանքների թերակատարման հիմնական պատճառ է հանդիսանում գնային

առաջարկի 28.23 տոկոս պակաս հաշվարկված գումարը, որը տանում է կազմակերպության միտումնավոր սնանկությանը:

Նույն գրությամբ Ընկերությունը հայտնել է, որ այս կապացությամբ հարուցված է քրեական գործ:

Ընկերությանն ուղղված 25.12.2018թ. թիվ 02/16.4/6405-18 գրությամբ ՀՀ քաղաքաշինության կոմիտեն հայտնել է, որ հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված եզրակացությունը և Պայմանագրի 3.1.4-րդ կետի «ա» և «բ» ենթակետերը՝ Պատվիրատուն 25.12.2018թ. միակողմանի լուծում է Պայմանագիրը:

«Գնումների մասին» ՀՕ 206-Ն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը:***

Պայմանագրի 3-րդ կետի 3.1.4-րդ ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե

ա) կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար.

բ) կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը):

Այսպիսով, ուսումնասիրելով գործում առկա նյութերը, գտնում եմ, որ «Երևանի տնաշինական կոմբինատ» ՓԲԸ-ն խախտել է Ընկերության և ՀՀ քաղաքաշինության կոմիտեի միջև 24.07.2017թ. կնքված «ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/5» ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը, քանի որ Ընկերությունը Պայմանագրի թիվ 2 համաձայնագրով հաստատված օրացուցային գրաֆիկի համաձայն պարտավորվել է

մինչև 31.10.2018թ. կատարել համապատասխան ծավալի և 195 219 հազ. ՀՀ դրամի ընդհանուր արժեքով աշխատանքներ, սակայն Ընկերության կողմից կատարվել են ընդամենը 73 276.151 հազ. ՀՀ դրամի աշխատանքներ, որն էլ իր հերթին հանգեցրել է Պայմանագրի էական խախտման:

Միևնույն ժամանակ գտնում եմ, որ «Երևանի տնաշինական կոմբինատ» ՓԲԸ-ի կողմից խախտվել է Պայմանագրով նախատեսված մեկ պարտավորություն, ուստի գտնում եմ, որ առկա չէ Ընկերությանը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 09.01.2019թ. թիվ 26-3/95-19 գրությամբ «Երևանի տնաշինական կոմբինատ» ՓԲԸ-ին (ՀՎՀՀ՝ 01228598) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**